Տեղեկանք

ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության մոնիտորինգի հանձնաժողովի և միջազգային կազմակերպությունների համագործակցության վերաբերյալ

1. ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության մոնիտորինգի հանձնաժողովը, ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի 2007թ. սեպտեմբերի 7-ի N 8-43 արձանագրությամբ հաստատված ՀՀ հակակոռուպցիոն նոր ռազմավարության նախագծի նախապատրաստական աշխատանքների կազմակերպման շրջանակներում համագործակցել է ՀՀ-ում գործող մի շարք շահագրգիռ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

Դեռևս 2003թ.-ին ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրի մշակման ժամանակ Հայաստանում ԵԱՀԿ գրասենյակի գլխավորությամբ ձևավորվել էր հակակառուպցիոն ռազմավարության ձևավորման և իրականացման մոնիտորինգի հարցերով Հայաստանում գրանցված միջազգային կազմակերպությունների աշխատանքային խումբ: Այդ խումբը ԵԱՀԿ գրասենյակի ներկայացուցչի գլխավորությամբ իր կազմում ընդգրկում է Եվրոպական խորհրդի, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության, Միավորված Ազգերի կազմակերպության Զարգացման Ծրագրերի, Համաշխարհային բանկի, Մեծ Բրիտանիայի Միջազգային զարգացման նախարարության և այլ շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչներ:

2.**ԵԱՀԿ** Հայաստանյան գրասենյակը 2007թ ընթացքում կոռուպցիայի դեմ պայքարում իր օժանդակությունը ցուցաբերել է Երևանում, Լոռու և Գեղարքունիքի մարզերում քաղաքացիների հակակոռուպցիոն հանրային ընդունարանների ստեղծման, որպես հակակառուպցիոն միջոցառում քաղաքացիական ծառայության համակարգում հասարակական կազմակերպությունների կողմից մոնիտորինգի իրականացման ծրագրերի, ինչպես նաև ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2009-12թթ միջոցառումների ծրագրի տեխնիկական առաջադրանքի մշակմանը աջակցության միջոցով: 2008թ. նախատեսում է շարունակել այս ուղղությամբ աշխատանքները:

3.**Եվրոպայի խորհրդի** Երևանյան գրասենյակը ՀՀ հակակառուպցիոն ռազմավարության իրականացման գործում հիմնականում աջակցությունը պայմանավորվել է ՀՀ-ն GRECO-ին անդամակցության և երաշխավորություն-հանձնարարականների կատարման ընթացքի մոնիտորինգով: Հայաստանում Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչը իր պատրաստակամություն է հայտնել օժանդակելու ՀՀ հակակառուպցիոն նոր ռազմավարության մշակման աշխատանքներին՝ ռազմավարության նախագծի վերաբերյալ փորձաքննության կազմակերպման և ռազմավարության նախագծման ժամանակ սեմինար-պարապմունքների կազմակերպման միջոցով:

4.**ՄԱԶԾ-ն** 2007թ. իրականացրել է « Իրազեկման և հակազդեցության բարելավում Հայաստանում կոռուպցիայի բացահայտման գործընթացում» ծրագրի շրջանակներում Քաղաքացիական հասարակության միավորումների մարզային կազմակերպությունների կողմից ՀՀ առողջապահության և կրթության ոլորտում իրականացվել է կոռուպցիոն ռիսկերի գնահատում և առաջարկությունների ներկայացում դրանց կրճատման ուղղությամբ: ԶԼՄ-ների կարողությունների զարգացում, Հակակոռուպցիոն թեմաներով հեռուստահաղորդումների պատրաստում և հեռարձակում ՝ հատկապես մարզերում: Քաղաքացիների տեղեկատվության մատչելիության մեծացման ուղղությամբ ՀՀ Վճռաբեկ դատարանի էլեկտրոնային կայքի հագեցում և բարելավում: 2008թ. նախատեսվում է շարունակել աշխատանքները ԶԼՄ-ների կարողությունների զարգացումը, մարզերում քաղաքացիներին իրազեկման գործընթացների ակտիվացումը՝ խթանելով ԱԺ պատգամավոր և քաղաքացի կապը: Հայաստանի կողմից ՄԱԿ-ի «կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի պահանջների կատարման վերլուծություն:

5.**ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության** օժանդակության **Հակակոռուպցիոն գործունեության մոբիլիզացման ծրագիր (ՀԳՄԾ)**:

ՀԳՄԾ-ի նպատակն է նպաստել Հայաստանում կոռուպցիայի նվազմանը: ՀԳՄԾ-ն եռամյա ծրագիր է՝ երկու տարվա երկարաձգման հնարավորությամբ, որը սկսվել է 2007թ-ի հուլիսին՝նպատակ ունենալով նվազեցնել կոռուպցիան հետևյալ եղանակներով՝

1) Հայաստանի քաղաքացիների համար ստեղծել կոռուպցիայի դրսևորումների դեմ պայքարելու հնարավորություններ,

2) փոխել հասարակական կարծիքը, ինչպես նաև գործելակերպը երիտասարդների և մեծահասակների շրջանում՝ օգնելով նրանց ձևավորել կոռուպցիայի հետևանքների նկատմամբ համապատասխան վերաբերմունք և մեծացնել քաղաքացիների՝ կոռուպցիայի դեմ ընդվզման հավանականությունը,

3) հնարավորություններ/պայմաններ ստեղծել համակարգային փոփոխությունների համար, որոնք կկանխարգելեն կամ կնվազեցնեն կոռուպցիոն ռիսկերը և դրսևորումները:

Հանդիսանալով համապարփակ հակակոռուպցիոն նախաձեռնություն, որի նպատակն է կոռուպցիայի նվազեցումը թե՛ տեղական, թե՛ համակարգային մակարդակներում՝ ՀԳՄԾ-ն կտրամադրի տեխնիկական աջակցություն Հայաստանի Հանրապետության պետական մարմիններին և հասարակական կազմակերպություններին, ինչպես նաև կիրականացնի վերապատրաստման ծրագրեր վերջիններիս համար:

Նշված գործողություններն կիրականացվեն հետևյալ ծրագրային բաղադրիչների միջոցով.

Բաղադրիչ 1. Ստեղծել բողոքների արձագանքման մեխանիզմ, որը կնպաստի համակարգային ու ընթացակարգային բարեփոխումների իրականացմանը:

ՀԳՄԾ-ն կնպաստի հանրապետության բոլոր 11 մարզերում (ներառյալ Երևանը) Քաղաքացիների հակակոռուպցիոն պաշտպանության և օժանդակության կենտրոնների (ՔՀՊՕԿ) ստեղծմանը: Այդ կենտրոնները հնարավորություն կընձեռեն քաղաքացիներին՝

- ստանալ իրավաբանական խորհրդատվություն և հարցեր տալ իրենց հանդիպած կոռուպցիայի դեպքերի վերաբերյալ: Քաղաքացիները հնարավորություն կունենան նաև արձանագրել և գրավոր ներկայացնել չարաշահումների դեպքեր ՀՀ պետական կառավարման մարմիններին և ստանալ աջակցություն բողոքներին իրավական ընթացք տալու հարցում:
- ՀԳՄԾ-ն ՔՀՊՕԿ-երի հետ մեկտեղ նաև գործնական հարաբերություններ կստեղծեն պետական մարմինների պաշտոնյաների հետ՝ խրախուսելու կոռուպցիայի նվազեցմանը միտված գործողությունների և համակարգային բարեփոխումների իրականացումը:

Բաղադրիչ 2. Մշակել և իրականացնել հակակոռուպցիոն նախաձեռնություններ ընտրված պետական մարմինների հետ:

ՀԳՄԾ-ն կօժանդակի կառավարությանը համակարգային լուծումներ ենթադրող բարեփոխումների իրականացման հարցում՝ աշխատելով հակակոռուպցիոն գործողությունների հիմնական դերակատար հանդիսացող կառույցների, մասնավորապես՝ վերջերս անկախ պետական մարմին դարձած վերահսկիչ պալատի, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի և վերջինիս նախատեսվող տարածքային գրասենյակների և Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողովի հետ: Համակարգային բարեփոխումների իրագործման հետ մեկտեղ ՀԳՄԾ-ն կաջակցի այդ գործընթացում քաղաքացիական հասարակության դաշտի ներգրավմանը և ԶԼՄ-ների կողմից այն միջոցառումների կազմակերպմանը, որոնք կլուսաբանեն բարեփոխումների իրականացման ընթացքը:

Բաղադրիչ 3. Հասարակական կազմակերպությունների կողմից նոր մոտեցումների մշակում կոռուպցիայի դեմ գործողությունների համախմբման նպատակով:

ՀԳՄԾ-ն կաջակցի քաղաքացիական հասարակությանը (ներառյալ ՀԿ-ներին, լրատվամիջոցներին, գործարար խմբերին կամ համայնքային խմբերին)՝ մշակելու կոռուպցիայի դեմ գործողությունների համախմբման նոր մոտեցումներ: Ի լրումն տեխնիկական աջակցության՝ ՀԳՄԾ-ն կտրամադրի դրամաշնորհներ հակակոռուպցիոն միջոցառումների

համար, որոնք կենթադրեն հստակ գործողություններ և շոշափելի արդյունքներ: ՀԳՄԾ-ն կհայտարարի և կտրամադրի դրամաշնորհները ըստ նախապես հստակեցված չափանիշների, որոնք հնարավորություն կտան գործընթացում ներգրավել մարզային կազմակերպություններ և ուղղված կլինեն ՔՀՊՕԿ-երի միջոցով վեր հանված խնդիրների լուծմանը:

Կոռուպցիայի վերաբերյալ գիտելիքների հարստացման նպատակով ՀԳՄԾ-ն կկազմակերպի հակակոռուպցիոն համաժողովներ մայրաքաղաքում և շրջաններում՝ որպես խոսնակներ հրավիրելով կառավարության պաշտոնյաների, ՀԿ ղեկավարների և այլն:

Բաղադրիչ 4. Երիտասարդության և մեծահասակների շրջանում կոռուպցիայի հետևանքների վերաբերյալ իրազեկվածության մեծացում: ՀԳՄԾ-ն կաջակցի մի շարք հասարակական կրթության և իրազեկության միջոցառումների կազմակերպմանը: Նման ծրագրերը քաղաքացիներին կդարձնեն առավել իրազեկ կոռուպցիայի պատճառների և հետևանքների մասին: Ծրագրի արդյունավետությունը կգնահատվի հարցումների միջոցով: Եվ վերջապես, ՀԳՄԾ-ն կաշխատի ՀՀ պետական մարմինները ներկայացնող գործընկերների և ՀԿ-ների հետ՝ արձանագրելու և հրապարակելու նրանց հաջողությունները: